

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Արդէն հրատարակուած էր Մասեայ Աղանույն միջոցաւ՝ թէ Թեոդոսիոյ մէջ *Օրիորդաց Վարժասուն* բացուեցաւ, յորում պիտի ուսանին աշակերտուհիք մեր ազգին այժմեան վիճակին պատկանելիք հարկաւոր ուսմունքները: Այս վարժատունը կրնդունի միայն երթեւեկող աշակերտուհիք, այսինքն այն օրիորդները որ առաւօտը կերթան դպրոց, եւ երեկոյին տուն կղաւնան: Եւ որովհետեւ ուրիշ քաղաքներէ ալ սկսան գտնուիլ փափաքողք իրենց զաւակները այս վարժատան աշակերտելու, հարկաւոր դատուեցաւ ունենալ Թեոդոսիոյ մէջ այնպիսի անձ մի, որոյ վրայ ամէնքս վրտահ լինիմք թէ ազգային օրիորդները ազգային ոգւով եւ բնատուր պարկեշտութեամբ կարող են պահպանուիլ նորա մօտ:

Անա այս պաշտօնին ամենայարմար տեսաք եւ որոշեցաք հաճութեամբ բազմաց քաջաձանօթ նահապետ վարժապետը Թովմեան, որ եւ սիրով յանձն առաւ այս ազգային աշխատութիւնը:

Աւտի որ քաղաքէն որ կամեցող զրանուի իւր զաւակը այս կերպով աշակերտել Թեոդոսիոյ Օրիորդաց վարժատան մէջ, օգոստոսի սկիզբէն կարող է ուղղակի դրկել նահապետ վարժապետին ամենայն վստահութեամբ:

Վարժատան տրուելու տարեկան վարձքէն իզատ, որ է 66 բուպի արծաթ, ինչպէս որ հրատարակուած էր ամսագրոյս մէջ, նահապետ վարժապետին մօտ մնալու համար զաւակ յուղարկողը պիտի հատուցանէ տարեկան 120 բուպի արծաթ, իւրաքանչիւր կէս տարեկանը կանխիկ. եւ օրիորդը արտաքին հագուստէն իզատ պիտի ունենայ հետը բաւական ճերմակեղէն, պատառաքաղ, դրրգալ, սանտր եւ այլն:

Արտաքին հագուստը յուղարկողը կարող է կամ ինքը պատրաստել, կամ քաղաքին մէջ ծանօթ մէկուն յանձնել, եւ կամ նահապետ վարժապետին. որովհետեւ կարելի եղածին չափ միաձեւութիւն ունենալու են աշակերտուհիք նաեւ հագուստի կողմանէ:

ՀՈԳԱՐԱՐՁԱՒԻՔ

Դպրոցին Օրիորդաց Հայոց Թեոդոսիոյ:

Թեոդոսիա, 20 յունիսի 1860: